Հարստանիք անոնիներից Դուէր	31 79
Զանազան անձինքներից Դուէր	4 17
Գինեվաճառութիւնք արդիւնք Յովհաննէս Խաչատրեանից	16
Գումարն է	129 96

Եկ. 1870 մ.

Հայկէն Ուսուցչի վարձք	61 10
Պաւերէն Ուսուցչի վարձք	85
Վառելիք և միւս ծախսերին	18
Գումարն է	164 10

Մնացած ընթացք 1871 մ.

Պ. Գրիգոր Տ. Թաւշանեան Դուէրից	11 97
Պ. Յովակիմ Բաղիշեցի Դուէրից	2 70
Հարստանիք անոնիներից Դուէր	2 74
Պշտարդի արդիւնք	152
Մատենաւորութեան արդիւնք	130
Գինեվաճառութեան	36
Աշակերտներից տարեկան վարձք	90 50
Գումարն է	425 91

Եկ. 1871 մ.

Հայկէն Ուսուցչի վարձք	45
Պաւերէն Ուսուցչի վարձք	68
Մանկավարժին տուաւ	8
Վառելիքի և միւս ծախսից	5
Գումարն է	126

Մնաց ընթացս 1872 մ.

Յանուանէր Եղբիրոյ Հանարակութեան	
Գրիգոր Շահնազարեան Դուէրից	2
Ազգեան Գանդիանց Դուէրից	2
Պ. Լէոն Ուսանիկ Եէր Ճարտիր Նեանց Դուէրից	6 15
Պ. Գրիգոր տէր Թումանեանց Դուէրից	4
Հարստանիք անոնիների Դուէրը	9 52
Աշակերտաներից տարեկան վարձք	136 90
Պշտարդի արդիւնք	103
Մատենաւորութեան արդիւնք	123
Գինեվաճառութեան	48
Մանանայի տոկոս պարտից	20
Գումարն է	454 57

Եկ. 1872 մ.

Հայկէն Ուսուցչի վարձք	60
Մանկավարժի վարձք	42
Գնեցաւ կշտարդ	80
Տարեսկզբ	62
Գումարն է	182 62

Ընդարձակ գումարն է 1268 Ռբլ. 64 Կ.

Ծրագրի ծախսից գումարն է 738 Ռբլ. 63 Կ.

Բառնալով եկբի ի մէջ մնաց 530 Ռբլ. և 1 կոպէկ, առ մէկն Յունվարի 1873 ամի.

Հոգաբարձուք
Ազգաբան Գանանեանց
Սիրաս Պանոսեան Ալանկերեան

ԳԱՆՁԻԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ Ս. ՍՈՒԼԹԱՆԻՆ ՀՈԳԵՒՈՐ ՕՇԱԿԱՆ ՆԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՌՈՍԱՑԱԾՔՆԵՐՆ

(Ի թուականն Ճանկելոյ)

Ուստի սառնալով բազմաթիւր Սգնեաբանեակ հոյակապ հաստատութիւնից տեղւոյն Սուրբ Սահակեան Հոգեւոր Ուսումնարանի ողբալի կրութիւնն մնաց, Վեհափառ Կամենոյեանցն բարեհաճեալ հրամայեալ ինձ՝ ի ձեռն Սինոդի տրոյ Եպիսկոպոսի՝ փութալ անյապաղ ի Սգնաբ և ամենայն անհրաժեշտութիւնսն վերահաստատելոյ նոյն ուսումնարանի նկրբին և արտաքին կառավարութեան վերայ։ Երբ յայտարարութեանն մնացեալ վերահաստատեանս հեռանալնին, նորին Օծութիւնդ՝ ցուցեալով Սգնաբի ուսումնարանի անբարեկարգ դրութեան վերայ և յիշեալով Սրբոյն առաքելոյ պն խոսքերը թէ՝ «Եթէ որ Դեղանին առաքէ ածելոյ յանդիմանէ՝, դի և զայն Էլիէլեն։» թոյլատրեց ինձ հրատարակել քննութեան հանուած պատկերը, որպէս զի մի կողմից Սգնաբի Ձայ հաստատութիւնը հանկստանայ՝ իմանալով որ ի զուր չէ անցել իւր բոզդրը, իսկ միւս կողմից Ս. Սահակեան ուսումնարանի վարչութիւնը միամտանայ՝ տեսնելով որ քննիչը հաստատել է իւր

բոլոր վերահասութիւնը ոչ թէ զբաղարտութեանց և թշնամական չարախօսութեանց վերայ, այլ ճշգրիտ փաստերի վերայ, այն է՝ ուսումնական և տնտեսական կառավարութեան մատեանների և գրաւոր ապացոյցների վերայ։

Սղնախի սուրբ Սահակեան ուսումնարանը (տըղայոց) հաստատած է հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի կոնդակով 1860 թուին և պահպանուում Սղնախի և Նորա վիճակի մոմավաճառութեան և ուխտատեղեաց արդիւնքներով և որոշած տարեկան օժանդակութիւնով 120 ռուբլի արծաթ սուրբ Կարապետ եկեղեցուց և Նոյնչափ սուրբ Գէորգ եկեղեցուց տեղւոյն։ Այս արդիւնքներից գոյանում տարեկան մուտք միջին թուով մինչև 2000 ռ. (ինչպէս կտեսնենք յետոյ)։ Բացի սորանից՝ առանձին նուիրաբերութեան մատեանից երևում որ ուսումնարանի հաստատութեան ըսկզբում ազգասէր և ուսումնասէր մարդիկ նուիրել են յօգուտ Նորին մինչև 10,000 ռ. խոստանալով հատուցանել բոլոր գումարը հինգ տարի ժամանակում և հատուցել են առաջին տարւոյ համար 1023 ռ։ Նոյն միջոցներին բարեպաշտ Սօսի Լիանոզեանցը նուիրել է ուսումնարանին միանուագ 1000 ռ. ի յիշատակ իւր հանգուցեալ որդւոյ, ընդ ամէն՝ 2023 ռ. 1)։

Թէպէտ ահա այսպիսի հաստատուն և յարատև աղբիւրները ապահովացնում են ուսումնարանի պահպանողութիւնը, սակայն սա՝ իւր ծննդեան օրից չունենալով կանոնաւոր կառավարութիւն թէ ըստ տնտեսական և թէ ըստ ուսումնական մասին՝ փոխանակ յառաջադիմութեան և ծաղկման ցուցել է միշտ յետադիմութիւն և ապարդիւնաւորութիւն, իսկ ներկայ հոգաբարձուների, տեսչի և վարժապետների օրով հասել է նա միանգամայն խանգարեալ դրութեան։

Ահա և ապացոյցներ։

1) Ազգասէր և բարեպաշտ նուիրատուները, տեսնելով ուսումնարանի պակասն անկարգութիւնները և հոգաբարձուց անբարեխղճութիւնը և անհոգատարութիւնը դադարեցրել են խոստացած գումարի հատուցումն։ Նոյն իսկ նուիրած 2023 ռ. անհետացած է այժմ։

Մի ուսումնարանի յառաջադիմութիւնը ըստ ուսումնական մասին նախ և առաջ և գլխաւորապէս կախուած է տեսչի կառավարութիւնից, եթէ ունի նա օրինաւոր պատրաստութիւն և արիաջանութիւն։ Իսկ Սղնախի ուսումնարանի տեսուչը՝ Պ. Սարգիս Եղիգարեանց՝ Տփխիսի կլասիքական գիմնազիայի ուսումը կիսատ թողած լինելով՝ ուստի և չունենալով արժանաւոր պատրաստութիւն վարել տեսչական բարձր պաշտօնը և բոլորովին անտեղեակ լինելով թէ ի՞նչ է մանկավարժութիւնը և ինչ եղանակով պէտք է կառավարել ուսումնարանը, իւր անհմտութեամբ և մանաւանդ աններելի անհոգութեամբ վեց տարու ընթացքում (1866 թուի Հոկտեմբերի 3 ից մինչև այսօր) հասցրել է ուսումնարանը իւր անկման կետին։

Զպահելով աշակերտների ընդունելութեան և արձակման մատեանները՝ տեսուչը չգիտէր թէ իւրաքանչիւր աշակերտ քանի՞ տարի է մնում ուսումնարանում, ուստի դժուարին էր որոշել աշակերտների յառաջադիմութեան աստիճանը ըստ ժամանակի։

Շտալով ուսումնարանին կանոնաւոր ընթացք՝ տեսուչը յառաջացրել էր մի մեծ և տարօրինակ անյարմարութիւն. պատրաստական դասատան մէջ եղել են միշտ 50 — 70 աշակերտք, իսկ առաջինում 9—8, երբեմն մինչև անգամ 4 և 3։

Պարտաւոր լինելով տեսչական պաշտօնի հետ միասին ուսուցանել և Ռուսաց լեզու, Թուաբանութիւն և Աշխարհագրութիւն, Պ. Եղիգարեանցը ըստ իւր վկայութեան դադարացրել է Աշխարհագրութեան դասախօսութիւնը վերջին երեք տարին, բայց մատեանների մէջ նշանակած են և նոյն առարկայի դասերը և շատ տեղ ստորագրած իրր եղած։

Տեսուչը՝ իբրև վարժապետ յաճախ բաց թողնելով դասերը, չէ պահանջել և միւս վարժապետներից արիաջանութիւնը, ուստի և նոքա հետևել են նորա օրինակին, ինչպէս կտեսնենք յետոյ։ Իսկ Պ. Արշակ Տէր Ստեփանեանցն՝ իբրև վարժապետ Հայկական լեզուի, վայելչագրութեան, երգեցողութեան և ազգային պատմութեան, դադարացրել է այս վերջին առարկայի դասատուութիւնը երկու տարու ընթացքում։

Հոգաբարձուները, թէպէտև շատ անփոյթ գէպ ի ուսումնարանի ընդհանուր կառավարութիւնը, նկատելով որ ինքը տեսուչը և միւս վարժապետները շատ գասեր են կորցնում և տեսնելով որ ըստ մեծի մասին շատ ուշ են մտնում նոքա դասատուն և շատ շուտով են դուրս գալի այնտեղից՝ իւրեանց գրութեամբ ի 17 փետր. 1869 համար 1 (ՎԷ-Յ ԼԷ---) յիշեցնումն տեսչին իւր պարտաւորութիւնը և առաջարկում լինել արթուն և արիաջան։ Բայց վարժապետները շարունակելն են վարուել իւրեանց ծուլութեան կանոնով։

Ահա և ցուցակ բացակայութեան վարժապետաց։

	Բացակայութիւնք վարժապետաց։ Թիւ դասերի։ Հիւանդ. պատճ.	Առանց ցուց. պատճ.	Գումար.
Ա. մատեան № 7 հերկայութեան եւ բացակայութեան վարժապետաց ի 5 Հոկտեմբերի 1866 թ. մինչեւ 3 Յունիսի 1867 թ.			
1. Սարգիս Եդիգարեանց (տեսուչ) ուսուցիչ ռուսաց լեզուի եւ թուաբանութեան եւ աշխարհագրութեան.	8	19	27
2. Արշակ Տէր Ստեփանեանց, ուսուցիչ Հայոց լեզուի, Հայոց պատմութեան, վայելչագրութեան եւ երգեցողութեան.		9	9
3. Աբէլ Սուգիասեանց, ուսուցիչ թուաբանութեան եւ վայելչագրութեանց.	5	6	9
4. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց, ուսուցիչ կրօնագիտութեան եւ Հայոց վայելչագրութեան.	11	28	39
			84
Բ. մատեան № 9 ի 5 Սեպտ. 1867 թ. ցՅ Յունիսի 1868 թ։			
1. Սարգիս Եդիգարեանց.	15	53	66
2. Արշակ Տէր Ստեփանեանց.	8 5	69	82
3. Աբէլ Սուքիասեանց.	2	40 50	62
4. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.	1	30 77	108
			318
Գ. մատեան № 10 ի 30 Սեպտ. 1868 ամի մինչեւ 7 Յունիսի 1869 ամի։			
1. Սարգիս Եդիգարեանց.	4	65	69
2. Արշակ Տէր Ստեփանեանց.	2	6 78	86
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.		1 89	90
			245

Դրաճոխ. 1. Ուսման սկզբից մինչեւ 1869 թ. մարտի 8ը հինգ ամսից աւելի ժամանակ դադարած են եղել երկու դասատան մէջ թուաբանութեան եւ ռուսաց վայելչագրութեան դասատուութիւնը, թուի թէ վարժապետ չունենալու պատճառով, ուստի կորած են 205 դաս. յետոյ թուաբանութիւնը շարունակել է տեսուչ Եդիգարեանցը, իսկ վայելչագրութիւնը Արշակ Տէր Ստեփանեանցը, բաժանելով իւրեանց մէջ նոյն առարկաների ուսուցչի ռոճիկը։

Դրաճոխ. 2. Ապրիլի 7, 8, 9, 10, 11, 12, 28, 29, 30 եւ 31 ին, եւ Մայիսի 1, 2 եւ 3-ին երկու դասատան մէջ պէտք է լինէր 104 դաս, բայց եղել է միայն 12, կէսը կրօնագիտութեան եւ կէսը Հայոց վայելչագրութեան, եւ 4 դաս Հայոց լեզուի. իսկ ապրիլի 12, 28 եւ 29 ամենեին չէ եղել դասատուութիւնը բոլոր վարժապետների չգալու պատճառով։

Դ. մատեան № 6 ի 8 Սեպտ. 1869 ամի մինչեւ 30 Մայիսի 1870 ամի։

1. Սարգիս Եդիգարեանց.		63	63
Դրաճոխ. Այս տեղից սկսած Եդիգարեանցը դադարացրել է աշխարհագրութեան դասախօսութիւնը։			
2. Արշակ Տէր Ստեփանեանց.	10	5	15
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.	2	52	54
			152
Ե. մատեան № 8 ի 28 Հոկտ. 1870 ամի մինչեւ 24 Ապր. 1871 ամի։			
1. Սարգիս Եդիգարեանց.		9	9
2. Արշակ Տէր Ստեփանեանց.	1	22	23
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.		54	54
			86
Զ. մատեան № 11 ի 13 Սեպտ. 1871 ամի մինչեւ 12 փետր. 1872 ամի։			
1. Սարգիս Եդիգարեանց.	9	4	13
2. Արշակ Տէր Ստեփանեանց.	52	14	46
3. Տէր Սարգիս Տէր Ստեփանեանց.	10	5 14	27
			86
Ընդհանուր գումար			1156

Տեսչի և վարժապետների այս տեսակ չափազանց ծուլութիւնից և անհոգատարութիւնից զարգացել է զարմանալի ծուլութիւն և աշակերտների մէջ։

Ահա ցուցակ բացակայութեան աշակերտաց։

	Թիւ դասերի։
Ա. մատեան աշակերտաց յառաջադիմութեան ի 5 Հոկտ. 1866 ամի մինչեւ Մայիսի վերջը 1867 ամի։	
1. Պատրաստական դասատան մէջ.	4358
2. Առաջնի մէջ (նախ 8, յետոյ 5 եւ յետոյ 3 աշակերտ).	439
	4797
Բ. մատեան ի 1 Սեպտ. 1867 ամի մինչեւ 18 Մայիսի 1868 ամի։	
1. Պատրաստական դասատան մէջ.	5530
2. Առաջնի մէջ (նախ 8, յետոյ 6 եւ յետոյ 5 աշակերտ).	577
	6107
Գ. մատեան ի 30 Սեպտ. 1868 թ. մինչեւ վերջ Մայիսի 1869 ամի։	
1. Պատրաստականում.	1439
2. Առաջնում (նախ 9 եւ յետոյ 8 աշակերտ).	655
	2094
Դ. մատեան ի 22 Սեպտ. 1869 ամի մինչեւ 25 Մայիսի 1870։	
1. Պատրաստական դասատանում.	809
2. Առաջնում (նախ 5 եւ յետոյ 4 աշակերտ).	157
	966
Ե. մատեան ի 28 Սեպտ. 1870 ամի մինչեւ 24 Ապրիլի 1871 ամի։	
1. Պատրաստական դասատանում.	1085
2. Առաջնում (միայն 5 աշակերտ).	151
	1256
Զ. մատեան ի 13 Սեպտ. 1871 ամի մինչեւ 5 Ապրիլի 1872 ամի։	
1. Պատրաստական դասատան մէջ.	269
2. Առաջնում (նախ 5. եւ յետոյ 4 աշակերտ).	68
	337
Ընդհանուր գումար	15557

Առանձին առանձին աշակերտներից ոմանք բաց են թողել մի տարուայ մէջ 200, 250, 300 եւ աւելի դաս։

Ի հարկէ՝ մի ուսումնարանի մէջ, ուր վարժապետները յոյժ յաճախ բացակայ են գտանւում դասախօսութիւնից և աշակերտները հետևումեն վարժապետների օրինակին, չէ կարող ծաղկիլ ուսումն և յառաջադիմութիւնը։ Մի ամբողջ ամիս

ամենայն օր ներկայ գտանուելով Աղնախի ուսումնարանում դասերի ժամանակ՝ անձամբ անձին ստուգեցի որ արդարև աշակերտները շատ զարկ էին յառաջադիմութիւնից ոչ միայն արտաքին առարկաների մէջ, այլ մանաւանդ մայրենի լեզուի և կրօնագիտութեան մէջ։ Մի տարի սովորող աշակերտները հազիւ կապումէին հայերէն և ռուսերէն ընթերցանութեան վանկերը։ Երկու տարի սովորողները հազիւ կարողանումէին վարժ կարդալ։ Երեք տարի սովորողները թէև վարժ կարդումէին, բայց չէին հասկանում կարդացածը և աշխարհաբար ոճով գրած թեթև պատմութիւնները երկու երեք անգամ կարդալուց յետոյ զրժուարանումէին պատմել իւրեանց խօսքերով։ Չորս և հինգ տարի սովորողները հազիւ կարողանումէին թարգմանել աւետարանը գրաբարից աշխարհաբար և ամենևին ծանօթ չէին քերականութեան հետ։ Ռուսաց լեզուի մէջ առաւել ևս նուազ էին աշակերտները. թուաբանութեան մէջ նմանապէս. միայն 4—5 աշակերտ հազիւ գիտէին անսխալ կատարել առաջին չորս գործողութիւնը, բայց չէին կարողանում բացատրել պատճառները թէ ի՞նչու այսպէս էին վարում կամ այնպէս։ Աշխարհագրութիւնը և Հայոց պատմութիւնը խաւիանուած են վերջին երկու երեք տարին, ինչպէս վերը յիշեցինք։ Եկեղեցական երգեցողութիւնը եղել է միայն ըստ անուամբ, և աշակերտները ոչ միայն երբէք չեն երգել եկեղեցում կիրակի և մեծ տօն օրերը, այլ սովորութիւն չէ եղել տանել նոցա եկեղեցի, որով մանաւանդ շարժուած է եղել ժողովրդի տրտունջը։ Վայելչագրութիւնները զրատանումէին միւս առարկաների վիճակի մէջ։

Ահա և ապացոյցներ անյառաջադիմութեան ուսումնարանի, քաղած աշակերտների յառաջադիմութեան մատեաններից։

Աշակերտների յառաջադիմութեան թուանշանների գումարները, առանց հաշուելոյ վայելչագրութիւնների և երգեցողութեան թուանշանները։

Ա. վասն 1866 եւ 1867 տարի։ Բոլոր աշակերտները ի միասին։	0	1	2	3	4	5
1. Պատրաստական դասատան.	37	526	4307	5036	1262	444
2. Առաջին դասատան (նախ 8 յետոյ 3 եւ յետոյ 3 աշակերտ) .	9	23	63	130	153	95
	46	549	4370	5166	1415	539
Բ. վասն 1867-68 տարի։						
1. Պատրաստական դասատան.	45	291	1539	1036	269	117
2. Առաջին դասատան 8, 6 եւ յետոյ 3 աշակ.	54	44	235	502	196	15
	99	335	1574	1538	465	132
Գ. վասն 1867-69 տարի։						
1. Պատրաստական. .	24	165	605	342	59	5
2. Առաջին (նախ 9 եւ յետոյ 8 աշակերտ) .	56	64	280	278	190	54
	80	257	885	620	249	59
Դ. վասն 1869-70 տարի։						
1. Պատրաստական. .	9	40	408	85	7	2
2. Առաջին (նախ 3 եւ ապա 4 աշակերտ) .	17	56	116	115	35	չիք.
	26	76	524	200	42	2
Ե. վասն 1870-71 տարի։						
1. Պատրաստական. .	17	129	414	349	28	չիք.
2. Առաջին (միայն 3 աշ.)	4	7	48	137	12	չիք
	21	136	462	486	40	
Զ. վասն 1871-72 տարի։						
1. Պատրաստական. .	14	43	221	122	6	չիք
2. Առաջին (նախ 5 եւ յետոյ 4 աշակերտ.) .	31	55	179	230	101	2
	45	98	400	352	107	2

Հաշուի մէջ չեն մտած այն աշակերտները, որք վանկեր են կապում, որովհետև նոքա չունէին թուանշաններ։

Զննելով վերոյբերեալ ցուցակը՝ նկատումենք որ 2 թուանշանի գումարը ամենայն տարի առաւել է միւսներից, և թէ 5 թուանշանի գումարը հետզհետէ նուազումէ և բոլորովին սպառում, որով պարզ երևումէ թէ ուրախ յետադիմութեան ճանապարհի վերայ մղած է ուսումնարանը վեց տարու ընթացքում։

Այստեղ հարկաւոր է աւելացնել որ վարժապետները կատարումէին դասախօսութիւնը հին, դժուարին և մթին եղանակով, շատ անգամ բաց թողնելով կարևոր բացատրութիւնները և աւելի շատ անգամ ծանրաբեռնելով աշակերտների միտքը աւելորդաբանութիւնով։ Նոցա, որպէս և տեսչի, նոյն իսկ վարքը աշակերտների հետ չէր մանկավարժական, համեստ և մեղմ, այլ խիստ և կոպիտ, երբեմն ապտակներ տալով, երբեմն մազերը քաշելով, երբեմն ծանր խօսքեր ասելով և յոյժ յաճախ շրջացնելով։

Աղնախի ուսումնարանի զարմանալի յետադիմութիւնը և ապարդիւնաւորութիւնը ըստ ուսումնական մասին յառաջացել է ի հարկէ հոգաբարձուների անհոգատարութիւնից, որք նոյնպիսի անտարբերութեամբ կատարել են և տնտեսական մասն։ Ներկայ հոգաբարձուների հաստատութիւնից յետոյ միայն նոցանից՝ Պ. Սարգսեանց՝ հազիւ մի ամիս անցուցած հրաժարումէ պաշտօնից և գնումէ Պետերբուրգ։ Միւս հոգա-

բարձուն՝ Պ. Գրիգոր Շաբուրեանց՝ ինչպէս ինքը իւր բերանով վկայեց մի քանի անգամ՝ շատ մարդոց առաջև, չորս տարու ընթացքում մնալ է ուսումնարանի մէջ միայն վեց կամ եօթն անգամ; և այն վիճակաւոր Առաջնորդի, Բարձ Նկիրարայու և այլ երևելի անձինքների ուսումնարան գնալու պատճառով։

Երրորդ հոգաբարձուն՝ Պ. Մարգար Սահակեանց մնալով միայնակ կառավարել է ուսումնարանի տնտեսական մասն անկանոն եղանակով։ Փոխանակ ժողովելու և կիրեալ մատեաններին ու տեսայ մի քանի տետրակներ երկու երեք թերթից կարած, և մի քանի մատեաններ, որը վրացերէն, որը հայերէն, մուրը և ծախքը խառնած։ Նոցա մէջ ոչ թէ միայն նշմարուում էր զարմանալի անկարգութիւն և խանգարումն հաշուակալութեան կանոնների, այլ մուրի և ծախքի շատ յօդուածները բաւականին տարակուսելի էին։ Զորօրինակ՝ նաստիպար ուխտատեղու և Սղնախի սուրբ Աստուածածնի մատաղ արդիւնքները շատ նուազ են, այնինչ երկուքը ևս երևելի ուխտատեղիք են։ Սղնախի և նորա վիճակի եկեղեցիներու մէջ յօգուտ ուսումնարանի եղած տուփերը (գանձանակները) միշտ բացած են առանց ներկայութեան և սորադրութեան երեսփոխանի, քահանայի կամ ժամակոչի։ Միւս կողմից ծախսերը կատարուած են առանց խնայողութեան, որը նշմարուում մանաւանդ տեսչի և վարժապետների ոռճիկների մէջ, որք ամենևին չեն համապատասխանում մի ծխական դպրոցի դրութեան։ Տեսուչը՝ պարտաւոր լինելով ուսուցանել նաև ռուսաց լեզու, թուաբանութիւն և աշխարհագրութիւն (թէպէտ վերջին երեք տարի խափանել է այս առարկայի դասատուութիւնը) և ունենալով շաբաթը 17 դաս (բոլոր առարկաների համար) լատանում է տարեկան ռոճիկ 500 ռուբլի, ընդարձակ (երկու սենեակ, երկու նախասենեակ և մի խոհանոց), փայտ, ջուր և ծառայ, որը իրր ուսումնարանի պահապան յատկապէս ծառայում նորան։ Վարժապետը հայերէն լեզուի, հայոց և ռուսաց վարելչագրութեան, երգեցողութեան և ազգային պատմութեան (թէպէտ՝ երևի տեսչի օրինակին հետևելով՝ դադարեցրել է այս առարկայի դասախօսութիւնը վերջին երկու տարին), և ունենալով շաբաթը 21 դաս (բոլոր առարկաների համար) ստանում է տարեկան ռոճիկ 400 ռուբլի։ Վարժապետը կրօնագիտութեան և հայոց վարչագրութեան ունենալով շաբաթը 8 դաս՝ ստանում տարեկան ռոճիկ 120 ռուբլի։ Վիճակաւոր Առաջնորդը՝ նկատելով որ այս ռոճիկները ամենևին չեն համապատասխանում ուսումնարանի նիւթական կարողութեան, առանձին հրամանագրութիւնով պատուիրել է հոգաբարձուներին տալ տեսչին 400 ռ., կրօնագիտութեան վարժապետին 120 ռ. իսկ երրորդ վարժապետին 300 ռ. բայց ոչ թէ միայն Առաջնորդի հրամանը մինչև այսօր մնացել է անկատար, այլ հոգաբարձուներ սովորութիւն չեն ունեցել իւրաքանչիւր կորցրած դասի համար տուգանք պահանջել գոնէ 50 կոպէկ, որով չորս հինգ տարու միջոցում ի զուր չէր կորչի 5-6 հարիւր ռուբլին։

Ընդ հակառակն, ուրիշ այլ մասեր և հարկաւոր բաների համար ժլատութիւն է ցոյց տուած. սուսուչը և վարժապետները միաբերան վկայեցին, թէ փայտ չունենալու պատճառով շատ անգամ խափանել են ուսումը ցրտից ստիպուած, թէպէտ ծախսարարական մատեաններին մէջ երևումեն բաւականին ծախսեր փայտի վերայ։ Վերջապէս, թէպէտ մատեաններին մէջ մի առ մի ցոյց տուած են ուսումնարանի բոլոր ծախսերը՝ ռոճիկները, փայտը, ջուրը, տան կարկատանքը ևն, բայց նոցա մէջ կան և մի այլ տեսակ ծախք «ՈՐԴՈՒՆ ՎԵՐՔԵԼԻ ԵՎ ԱՅԼ ԾԽՈՒԵՐ», անուանով, այս տեսակ ծախսերը իւրաքանչիւր տարի հասնումեն մինչև 100 ռ։

Ահա և համառօտ ցուցակ եկամուտի և ծախսերի։

Մուտք.

	Ռ.	Կ.
Ի 1 Յուլիսի 1868 ամի մնչև 1 Հոկտեմբերի 1872 ամի.		
Ա. Ստացած նախկին հոգաբարձու թիւնից		
1868 թուի Յունիսի 1-ին մնալով եւ փոխով. . .	448	42 կէս
Բ. Մուտքագրութիւնից.		
1868 թուին (Յուլիսի 1-ից սկսած). . . .	655	55
1869 թուին.	1595	17 կէս
1870 —	1655	64 կէս
1871 —	2681	88
1872 — (մինչեւ Հոկտ. 4-ն)	754	81 կէս
	7146	86 կէս
Գ. Ս. Կարապետ եւ Ս. Գէորգ եկեղեցիներից.		
1868 թուին.	240	
1869 —	240	
1870 —	240	
1871 —	240	
1872 —	240	
	1200	

Դ. Տփերից (գանձանակներից):

1868 թուին	15	55
1869 —	44	80
1870 —	64	86
1871 —	41	75
1872 —	51	50
	198	26

Ե. Այլ եւ այլ մուտք:

1868 թուին	4	20
1869 —	27	50
1870 —	23	70
1871 —	27	75
1872 —	88	50
	168	65
Ընդհանուր գումար	9132	20

Ծախք.

Ի 1 Յուլիսի 1868 ամի մինչեւ 1 Հոկտ. 1872 ամի:

	Ռ.	Կ.
Ա. Ռոճիկներ տեսչին, վարժապետներին եւ ծառ.		
1868 թուին (Յուլիսի 1-ից)	440	
1869 —	1016	67
1870 —	1038	
1871 —	1090	
1872 — (մինչեւ 1-ն Հոկտեմբերի)	814	
	4398	67
Բ. Այլ եւ այլ ծախք ուսումն. (փայտ ջուր եւլն):		
1868 (Յուլիսի 1-ից)	74	5
1869 —	75	12 կէս
1870 —	68	67 կէս
1871 —	242	25
1872 —	24	59
	454	69
Դ. Ծախք Նաստմիսարու եկեղեցւոյ, Սղնախի Ս. Աստուածածի մատրան եւ Սղնախի մոմավաճառութեան կրպակի վերայ (վարձ մոմ ծախողներին, ժամկոչին, մոմթափողին եւայլն):		
1869 թուին	22	5
1870 —	436	55
1871 —	240	89
1872 —	130	15
	829	44
Դ. Ուսուցիչ մոմ:		
1868 թուին Յուլիսի 1-ից	363	40
1869 —	722	55
1870 —	728	12 կէս
1871 —	1575	86
1872 —	160	70
	5550	61
Ընդհանուր գումար	9033	41

Ահա այս տասն հազարի չափ գումարը կորել է ի զուր, միանգամայն ապարդիւն, որովհետեւ ուսումնարանը փոխանակ յառաջադիմութեան ընդունել է յետադիմութեան ճանապարհի վերայ արագ արագ քայլերով։

Երևի թէ չ-ՀԱՅՐ է հաստատուել Սղնախի ուսումնարանը, որովհետեւ կորցրել է ոչ թէ յառաջադիմութիւնը եւ տնտեսական խնամակալութիւնը, այլ եւ ուսումնարանավայել արտաքին կերպարանքը։ Շինութիւնը միանգամայն քայքայուած է ներսից եւ դրսից. առաստաղների տախտակները փտել են եւ ծռուել եւ սպառնում են վաղը միւս օրը փլչել. դռները եւ պատուհանները խախտուած, տանիքի կղմինտրները կոտրատած եւ թափած եւ անձրևի ջուրը հեղեղի պէս մտնում է ներս եւ գոյացնում գրեր, ինչպէս պատահեցաւ իմ ժամանակ երկու երեք անգամ։ Դիմակային Առաջնորդը իւր գրութեամբ ի 1 Ապր. 1866 ամի №81 պատուիրել էր սուրբ Կարապետ եկեղեցու երեցփոխան Յովսէփ Ամիրխանեանցին նորոգել ուսումնարանի սենեակները, որովհետեւ նոքա պատկանում են նոյն եկեղեցուն. բայց Պ. Ամիրխանեանցը թողել էր Առաջնորդի հրամանը անկատար մինչև Հոկտեմբերը 1869 թուի։ Այդ միջոցին հոգաբարձուները առաջարկութիւն են ստանում գործակատարից ի 24 Հոկտ. 1969 ամի №187 նորոգել ուսումնարանը Առաջնորդի գրաւ պատճառով. ուստի նոքա գրով ի 29 նոյն ամսի №4 խնդրում են երեսփոխանին նորոգել ուսումնարանը հմտաձայն գործակատարի առաջարկութեան և Առաջնորդի նախընթաց հրամանագրութեան։ Բայց Պ. Ամիրխանեանցը գրով ի 15 Նոյեմբ նոյն թուի №10 պատասխանում է նոցա թէ մեծ մեծ ծախսեր ունենալով նոյն եկեղեցու զանգակատան շինութեան վերայ՝ չէ կարող նորոգել ուսումնարանը և առաջարկում նորան նորոգել այն ուսումնարանի արդիւնքներով մինչև որ Առաջնորդը կանէ մի այլ տնօրէնութիւն։ Հոգաբարձուները խնդրագրով ի 11 նոյն ամսի և թուի №5 բողոքում են առաջնորդին երեցփոխանի կամակորութեան վերայ և խնդրում են առնել արժանաւոր տնօրէնութիւն. Առաջնորդը երկրորդ գրութիւնով ի 9 Յունվ. 1870 թուի, №3 պատուիրում է հոգաբարձուներին և երեսփոխանին՝ «ամենևին չբաժանել ուսումնարանը եկեղեցուց և եթէ կարելի է առաջ ուսումնարանի թերութիւնները հեռացնել և յետոյ եկեղեցւոյ. որովհետև ուսումնարանը շինածը սուրբ Սահակ Պարթև մեծ հայրապետի անունով՝ լինելով բոլորովին հնացած առաստաղումդներում և լուսամուտներում, չէ կարող պարծանքով կրել իւր ճակատի վերայ սուրբ հայրապետի անունը։ Ուրեմն մեր սիրելիք շտապեցէք միմեանց օգնականութեամբ ապահովացնել սուրբ Սահակեան ուսումնարանի վիճակը ամենայն կողմից համաձայն մեր առաջին գրութեան ի 1 ապր. 1866 թուի №81 և մեր պատուիրանքի կատարման հետևանքները հաղորդել մեզ ձեր համախոհական ծանուցագրով և մխիթարել մեր վշտացած սիրտը»։ Առաջնորդը երեք տարի սպասում է մխիթարութեան։ Հոգա-

բարձունները և երեսփոխանը դեռ չեն դառել համախոհ, ուստի Առաջնորդի հրամանը մինչև այսօր մնում անկատար, իսկ ուսումնարանի շինութիւնը այնչափ վնասուել է և խանգարուել, որ մի տարուց յետոյ անկարելի կլինի շարունակել նորա մէջ ուսումը։

Տեսնելով ուսումնարանի այսպիսի խեղճ դրութիւնը և ի նկատի ունենալով Առաջնորդի երկու հրամանագրութիւնը, ես առաձին գրութիւնով ի 23 սեպտ. անցեալ 1872 ամի № 1 առաջարկեցի երեցփոխան Յովսէփ Ամիրխանեանցին կատարել գոնեա մասնաւոր կարկատանքը փոխելով տանիքի վերայ կոտրատած կղմինտրները որ խափանուի անձրևի ջրի կաթիլը։ Իրր կատարելով իմ առաջարկութիւնը՝ պ. Ամիրխանեանցը տնօրինել էր փոխել 20-40 կղմինտր, այն ինչ հարկաւոր էր փոխել 1000 և աւելի հատ։

Սինոդն Ս. Էջմիածնի իմանալով իմ յայտարարութիւնից Սղնախի սուրբ Սահակեան ուսումնարանի ողորմելի դրութիւնը՝ ունի շուտով առնել արժանաւոր տնօրէնութիւն կարևոր բարեկարգութիւն տալու համար նոյն ուսումնարանին։

Աւարտելով այստեղ մեր վերահասութեան բովանդակութիւնը և նորա հետ միասին և մեր յօդուածը, աւելորդ ենք համարում առնել որ և իցէ տեսակ խորհրդածութիւն, այլ բաւականանում ենք մի անգամ դարձեալ կրկնել սրբազան Պօղոս Առաքեալի խօսքը թէ՝ Ի-է -ր+ Դ-Ն-Լ-Ն՝ -Ր-Ջ -Դ-Ն-Ց-Ն յ-Ն-Ի-Ն-Ն-՝, զի Ե -ՅՐ-Ն Ի-Ի-Ն-Ն։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՌՏԱՄԵԱՆ.

ՆՈՒԷՐ ԵՒՓԻՄԻ ՏԻԿՆՈՋ.

Վաղարշապատու Ս. Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութիւնն, ստանալով այս օրերս Կ. Պոլսեցի Համեստափայլ Տիկին Եւփիմէ Մաղումեանցից (որ է քոյր մեր Վեհափառ Հայրապետի) տարեկան նուիրաբերութիւնը 100 ռ. արծ. վասն սոյն 1875 ամի, եւ մի Կ. Պոլսեցի աղգասէր Պարոնից նոյնպէս 100 ռ. արծ. միանուագ նուէր յօդուտ նոյն ուսումնարանի, սեպուհ պարտաւորութիւն է համարում իւր հրապարակական շնորհակալութիւն մատուցանել նոցա, եւ մանաւանդ բարեպաշտուհի Տիկին Եւփիմէ Մաղումեանցին, որն լինելով սկզբնական պատճառ բացման այս ուսումնարանի, իրրեւ բարերարուհի եւ միանգամայն Հոգաբարձուհի, միշտ հոգացել է մայրական խնամքով եւ յանախ այցելութեամբ ոչ միայն ուսումնարանի նիւթական ապահովութեան վերայ, այլ եւ նորա ծաղկման եւ յառաջադիմութեան վերայ։ Արդ իսկ լինելով Կ. Պոլսում անձնական տկարութեան պատճառով, չէ պակասացնում նոյն ուսումնարանից իւր խնամակալութիւնը եւ հեռաւոր տեղից։

Տեսուչ Ս. Գայիանեան Օրիորդաց
ուսումնարանի Վարչապետ.
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՌՏԱՄԵԱՆՑ

է 28 մարտի 1875 մ.

է Ս. Էջմիածին.

ՎԻՃԱԿԱՑԻՆ ԴՊՐՈՑ ՅԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ.

Աղեքսանդրապոլոյ Հոգեւոր դպրոցը, բարեպաշտ եւ Ազգասէր Հոգաբարձուաց հետ, Փոխանորդ Արժ. Սուրիաս վարդապետ Պարղեանցի եռանդուն ջանքը, վիճակին կարի անհրաժեշտ կարօտութենէն ստիպեալ, համաձայն թեմական դպրոցաց, Վիճակային Դպրոցի փոխարինելոյ կանոնադրութիւնը վեհ. Հայրապետ ամենայն Հայոց հաստատեց հանդերձ օրհնութեան եւ բաջալերական կոնդակաւ։

Նոցա այսպիսի նախանձելի եւ անխոնջ ջանքը եւ եկեղեցաշահ նպատակը հանդերձ շնորհակալութեամբ կգովեմք, եւ կմաղթեմք կարողութիւն, յաջողութիւն, եւ յարատեւ արդիւնաւորութիւն։

ՕՐԻՈՐԴԱՑ ՍԱՀԱԿԱՆՈՑՑ ԵՒԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Այնպէս հանդերձ շնորհակալութեամբք կնշդրդեմք մեր սիրելի Ազգայնոց Աղեքսանդրապոլոյ երկսեռ Հոգեւոր դպրոցաց համայն վարժապետաց եւ տեսչաց այն անձուկը, զի տեղւոյն աղքատիկ օրիորդաց մտաւորական Ջշուառ վիճակին կարեկցելով, ըստիպեալ յազգասիրութենէ, տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովանաւորութեան ներքեւ բացուելի Սա-